



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

01 հուլիսի 2021 թվականի թիվ 116-Ա

ք. Երևան

«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2021 թվականի հունիսի 21-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 39 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ տեսալսողական մեդիաձառայություն մատուցող «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) «Երկիր Մեդիա» տեսալսողական ծրագրի 2021 թվականի հունիսի 20-ի եթերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քարոզչության համար արգելված ժամանակահատվածում՝ ընտրությունների քվեարկության օրը քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութի հեռարձակման միջոցով սահմանված կարգի պահպանման վերաբերյալ դրույթների պահանջների խախտում:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2021 թվականի հունիսի 21-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Հեռարձակողի գործունեության դիտարկման արդյունքների հիման վրա 2021 թվականի հունիսի 21-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Արձանագրության մեջ մասնավորապես նշված է.

Սույն թվականի հունիսի 20-ին ժամը 08:30:13-ից մինչև 08:48:36-ը եթեր է հեռարձակվել «Երկիրն այսօր» լրատվական հաղորդումը, որի ընթացքում՝

- ժամը 08:30:13-ից մինչև ժամը 08:32:25-ը հեռարձակվել է ռեպորտաժ Ա. Չարչյանի ձերբակալման և նրա դեմ բողոքի քննության մասին: Ռեպորտաժի ընթացքում՝ 08:31:48-ից մինչև 08:32:08-ը, Էկրանին երևում է «Հայաստան» դաշինքի դրոշը:

- ժամը 08:32:25-ից մինչև 08:33:22-ը հեռարձակված ռեպորտաժի սկզբում ներկայացվել է «Հայաստան» դաշինքի կենտրոնական շտաբի ներկայացուցիչ Արամ Վարդևանյանի հայտարարությունը այն մասին, որ ԿԸՀ-ն պետք նիստ գումարի և քննության առնի քՊ

պատգամավորի թեկնածու Նիկոլ Փաշինյանի կողմից լռության օրը խախտելու հարցը՝ որպես ընտրական գործընթացի խախտում, քանի որ լրագրողի խոսքի ժամանակ նրա ետևում անընդմեջ երևում է «Հայաստան» դաշինքի խորհրդանիշը, կարգախոսը և դաշինքի առաջնորդի նկարը:

- Ժամը 08:33:23-ից մինչև ժամը 08:34:20-ը հեռարձակված ռեպորտաժի ընթացքում պարբերաբար ցուցադրվում է «Պատիվ ունեմ» դաշինքի խորհրդանիշը, ինչպես նաև պարբերաբար երևում են նաև դաշինքի ղեկավարը, անդամները և դաշինքի կարգախոսով պաստառը: Ռեպորտաժում ներկայացվում է նաև պատգամավորի թեկնածու Արթուր Վանեցյանի հայտարարությունը այն մասին, որ ուժայինները տեռոր են սկսել «Պատիվ ունեմ» դաշինքի աջակիցների նկատմամբ՝ նրանց բերման ենթարկելով ԱԱԾ, հատուկ քննչական ծառայություն, ոստիկանություն, և անհարկի խուզարկություններ իրականացնելով նրանց բնակարաններում:

Ըստ արձանագրության նույն օրը ժամը 14:30:21-ից մինչև 14:40:22 եթեր է հեռարձակվել «Երկիրն այսօր» լրատվական հաղորդումը, որի ժամը 14:38:25-ից մինչև 14:39:47-ը հեռարձակված ռեպորտաժում (Ժամը 14:38:25-ից մինչև ժամը 14:38:47-ը) հանդես է գալիս լրագրողը՝ հետևյալ խոսքերով, մեջբերում.

«Մեկ գեկուցագրի հիման վրա միջնորդություններ են ներկայացվում Երևանի ընդհանուր իրավասության դատարան, որպեսզի թույլտվություն տրվի խուզարկություններ կատարել «Հայաստան» դաշինքի Սյունիքի մարզում գտնվող ընտրական շտաբերում: Այս մասին հայտարարել է «Հայաստան» դաշինքի կենտրոնական շտաբի պաշտոնական ներկայացուցիչ Արամ Վարդևանյանը, առ այն, որ իշխանության պատվերով իրավապահ մարմինները այս քայլերով փորձում են ընտրության օրը ամեն կերպ խոչնդոտել դաշինքի շտաբերի աշխատանքը»:

Ռեպորտաժի շարունակության ժամանակ (Ժամը 14:38:48-ից մինչև ժամը 14:39:47-ը)՝ Արամ Վարդևանյանի ուղիղ խոսքն է, որի ընթացքում անընդմեջ, նրա ետևում երևում է «Հայաստան» դաշինքի խորհրդանիշով պաստառը:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի հունիսի 23-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հեռարձակողը վարչական վարույթի շրջանակներում որևէ բացատրություն չի ներկայացրել Հանձնաժողով:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի համաձայն՝ ընտրությունների նախընտրական քարոզչության իրականացման համար օրենքով սահմանված ժամանակահատվածում՝ տեսալսողական հաղորդումները հեռարձակվում են ընտրությունների մասին օրենսդրությանը համապատասխան.

Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը սահմանում են.

2. Ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը և դրան նախորդող օրն արգելվում է հեռարձակել քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութ՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ

հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձևով նախընտրական (հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ) քարոզչություն իրականացնելը:

3. Ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը և դրան նախորդող օրը ուղիղ եթերի ժամանակ քարոզչություն հնչելու դեպքում Հեռարձակողը պատասխանատվության չի ենթարկվում, եթե քարոզչության հեղինակն ուղիղ եթերում զգուշացվել է իրավախախտման մասին, իսկ կրկնակի քարոզչության դեպքում ուղիղ եթերը դադարեցվել է:

«Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է`

«Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Այդ ժամանակահատվածում քարոզչությունը ստորև անվանվում է նախընտրական քարոզչություն:

Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների, ինչպես նաև տպագիր մամուլի, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում` արբանյակային հեռարձակման ժամանակ) միջոցով արգելվում է»:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12)-րդ կետի համաձայն Հանձնաժողովը` վերահսկում է Հեռարձակողների կողմից նախընտրական քարոզչության` Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգի պահպանումը:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն` Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում` նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են`

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում` վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները»:

Հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 27-ի թիվ 68-Ա որոշմամբ հաստատված «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանության» 8-րդ մասի 12-րդ կետի համաձայն` նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Հեռարձակողների կողմից հեռարձակված տեսալսողական ծրագրերը ուսումնասիրելիս, բացառությամբ Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքներին անվճար և վճարովի կարգով տրամադրված եթերաժամանակի, դիտարկողը գնահատում է նաև` Ընտրությունների քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչական նյութի` տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ

հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձևով նախընտրական քարոզչության իրականացման առկայության հանգամանքը:

Հանձնաժողովն ամրագրում է, որ Հեռարձակողը տեսալսողական տեղեկատվություն հեռարձակելիս պարտավոր է պահպանել Օրենքով, իսկ ընտրությունների ընթացքում նաև ընտրությունների մասին օրենսդրությամբ սահմանված տեսալսողական տեղեկատվությանը ներկայացվող պահանջները: Մասնավորապես՝ ընտրությունների մասին օրենսդրությամբ հստակ սահմանված է որ ընտրությունների քվեարկության օրը և դրան նախորդող օրն արգելվում է հեռարձակել քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութ՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձևով նախընտրական քարոզչություն իրականացնելը:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ Օրենքով Հեռարձակողների համար պարտավորություն է սահմանված՝ ընտրությունների քվեարկության օրը և դրան նախորդող օրն որևէ քարոզչական կամ քարոզչությանը նպաստող նյութ չհեռարձակելը, որը՝ Հեռարձակողի կողմից չի պահպանվել և ավելին, ընտրությունների քվեարկության օրը՝ Հեռարձակողի լրատվական թողարկումների ընթացքում եթեր է հեռարձակվել կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների գործունեությունը լուսաբանող ռեպորտաժներ, ինչպես նաև ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ցուցակներում ընդգրկված ներկայացուցիչների մասնակցությամբ ռեպորտաժներ՝ քարոզչությանը նպաստող նյութի հեռարձակմամբ:

Փաստում ենք նաև, որ Հեռարձակողը Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ է, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով և «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթի պահանջը:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

Սույն օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 12-րդ կետերով, 56-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. «ՀՌԻՍԱԲԵՐ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված տույժը՝ գրավոր նախազգուշացում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՀՌԻՍԱԲԵՐ» ՓԲ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏՍԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

01 հուլիսի 2021թ.

ք. Երևան